ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 54 43 03

№ 2Մ/3-4/10885-12
12.10.2012թ.

«Հարկ վճարողների պաշտպանություն»
Հ/Կ նախագահ Փ.Թադևոսյանին

Հարգելի պարոն Թադևոսյան

ՀՀ վարչապետին հասցեագրված Ձեր 25.09.2012թ. N019 գրության կապակցությամբ հայտնում եմ.

Հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևաթղթերի համար վճարվող գումարները որպես ավելացված արժեքի հարկի գծով կատարված կանխավճարներ դիտարկելու Ձեր առաջարկության ընդունումը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն և ՀՀ ֆինանսների նախարարությունը համարում են ոչ նպատակահարմար՝ հետևյալ նկատառումներով.

1) հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևաթղթերի համար վճարվող գումարները ակցիզային դրոշմանիշերի ձեռք բերման համար վճարվող գումարների հետ համեմատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ՝

ա. մինչև 2011 թվականի հունվարի 1-ը (մինչև հարկային հաշիվների ձևաթղթերի համակարգի ներդրումը) հարկ վճարողը, միևնույն է, հարկային հաշիվների դուրս գրման գործընթացի վրա ծախսում էր որոշակի գումարներ, որոնք ներկայումս ծախսվում են հարկային մարմնի կողմից և փոխհատուցվում են հարկային հաշիվների ձևաթղթերի դիմաց գանձվող գումարներից,

բ. ակցիզային դրոշմանիշերի կիրառությունը պետության կողմից հարկ վճարողներին պարտադրված գործառույթ է, հետևաբար ակցիզային դրոշմանիշերի ձեռք բերման համար վճարվող գումարները որպես ակցիզային հարկի գծով կանխավճարներ դիտարկելը արդարացի մոտեցում է,

2) հարկ վճարողները հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևաթղթերի կիրառության փոխարեն կարող են հարկային հաշիվները դուրս գրել էլեկտրոնային եղանակով և անմիջականորեն հարկային հաշիվների ձևաթղթերի ձեռքբերման համար գումար ընդհանրապես չվճարել,

3) առաջարկության ընդունման դեպքում կսահմանափակվեն էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրման էլեկտրոնային համակարգի կիրառության խթանները և կխթանվի թղթային եղանակով հարկային հաշիվների դուրսգրումը, ինչը էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունից հետընթաց քայլ է դեպի թղթային փաստաթղթաշրջանառությունը:

Լրացուցիչ առաջարկում եմ նկատի ունենալ, որ.

1. ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1630-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման ընդունման հիմնավորման մեջ նշված չի եղել, որ հարկային մարմնից ձեռքբերվող հարկային հաշիվների ձևաթղթերը կեղծվել են, ենթադրություններ չեն կատարվել, որ դրանք կարող են կեղծված լինել, այլ ուղղակի նշվել են կեղծման ծրագրային և տեխնիկական իրական հնարավորությունները:

2. Կեղծումից պաշտպանված ձևաթղթի վրա հարկային հաշիվների դուրսգրման կարգի կիրառումը բխում է ոչ միայն հարկային մարմնի, այլև բարեխիղճ հարկ վճարողների շահերից, քանի որ գործնականում բացառում է իր անունով այլ անձի կողմից հարկային հաշիվների դուրսգրման հնարավորությունը: Այս առումով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից ընդունելի կարող են համարվել բարեխիղճ հարկ վճարողների շահերի պաշտպանությանն ուղղված գործողությունները:

Վ. Միրումյան

Անուղղակի հարկերի բաժին,
հեռ. 060 544 651